

ՀԱՅՈՑ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆՑԱԴՆ ԸՍՏ ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄՅԱՆԻ¹

ԱՆՈՒՇԱՎԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

« Խրիմյան Հայրիկի ուխտյալ երկիրը
Վասպուրականն էր, հայրենասիրությունը
հասնում էր մոլեռանդության, իսկ կրոնասիրությունը՝
մինչև բարձր առաքինության»

Րաֆֆի

*Իր երկերում Մ. Խրիմյանը համառոտ անդրադարձել է երկրագործու-
թյան շարացան ու շողացան համակարգերին, վար ու ցանքին, ոռոգմանն
ու պարարտացմանը, բերքահավաքին, կալսոցին, շտեմարանելուն, երկրա-
գործական պաշտամունքին: Կանգ առնենք այդ փուլերին առանձին-ա-
ռանձին:*

*Վար ու ցանք («վարուցան»): Մ. Խրիմյանը իրավացիորեն գտնում է, որ
«... մեր գիւղական ժողովրդի հողագործութեան վիճակը նոյն հնույթեան
խանձարուրին մեջ է... մեր բանեցուցած գործիքներ անտաշ, անարոեստ և
կոպիտ շինոածներ են, որ չէ թէ միայն գմեզ կը տանջեն, այլ առաւել մեր
խեղճ անխոսուն անասուններ»²: Նա քննարկում է, թե երկրագործության
մեջ «... ո՞րն է ավելի յարմարագոյն, ե՞զ, գոմե՞շ, թէ ձին»: Հանգում այն
հետևության, որ մենք սովորաբար եզ ու գոմեշ ենք օգտագործում, սա-
կայն փորձը ցույց է տալիս, որ եզն ավելի ձեռնտու է, քան գոմեշը: Գո-
մեշները մեծ ծախս ու խնամք են պահանջում, «փափուկ են ու մեծ դար-
ման կուզեն»³, ծանր գործիքի պատճառով է, որ գյուղացիները գոմեշ են
օգտագործում: Եթե գործիքները թեթևանան, գոմեշ լծելու կարիք չի լինի:
Մինչդեռ, եզի խնամքը հեշտ է, «... ոչ լոռնալ կուզէ և ոչ օծել. բաւական է
միայն քերոցով իւր կրնակ քերել և մարուր պահել»⁴ (ընդգծումը՝ Ա. Պ.): Սա-*

¹ Սույն հոդվածը կազմում է Մ. Խրիմյանին նվիրված աշխատանքի օրգանական շարունակությունը (տե՛ս Ա. Պետրոսյան, Սկրտիչ Խրիմյանը բանասաց, բանահավաք, ազգագրագետ, ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի «Տարեգիրք», գիրք 2, Երևան, 2011):

² Մ. Խրիմյան, Պապիկ և Թոռնիկ, Երկեր, Երևան, 1992, էջ 43:

³ Նույն տեղում, էջ 46-47:

⁴ Նույն տեղում, էջ 48: Այդ գործողությունը հայտնի է թիմարել անունով՝ քերիչով (խոզանակ) ձիու մաշկը մաքրել (տե՛ս Ստ. Մալխասյան, Հայերեն բացատրական բառարան, հ. 2, Երևան, 1944, էջ 107), որը գրավոր աղբյուրներում սակավ է հանդիպում: Ըստ դաշտային նյութերի քերոցն ուներ ուղղանկյան կամ քառանկյան տեսք, մի քանի շարք ատամնաշարեր, կաշվե փոկ, որի մեջ անա-

կայն եզրից ու գոմեշից ավելի, ձեռնտու է երկրագործության մեջ ձիու օգտագործումը: Ձիու «... կուրծքը կրկնապատիկ ոյժ ունի քան եզան վիզը... ձին շատ արագութիւն ունի»¹:

Մ. Խրիմյանը վկայում է, որ Վանի ժողովուրդը «... երկու կերպով գետին կը վարէ. եթե գետին կորդ է, գութանով կը վարէ, իսկ եթէ գետին անցեալ տարի վարոած լինելով փխրած է հողը, էն ժամանակ հարորով կը վարէ մի գոյգ գոմէշ կամ եզն լծելով»²: Ապրիլի վերջին կամ մայիսի սկզբին սկսում են գութանով վարը, «... առաջին նոսգին կաթնավար կասեն, երբ հողը կակուղ է և դիւրավար», այն հետո պնդանում է և վարելիս մեծ-մեծ կոշտեր են ստացվում: Այդ պատճառով գյուղացին շտապում է գութան լծել, որ «կաթնավարի ժամանակը չանցնի»³: Արձկե և Արեշ գավառներում հողը վարելու եղանակը տարբեր էր և արդյունավետ, որին «գիր» էին ասում: Գյուղացիները երկու անգամ էին վարում հողը. զարնան սկզբում արորով, մնում էր մինչև աշնան սկիզբը: Հետո վարում էին մի տեսակ արորով, որի խոփի երկու կողքերին խփված էին երկու տախտակներ՝ մի թիզ լայնությամբ: Տախտակների արանքում թողնված էր փոքր ճեղք, սերմնացանը սերմը գցում էր տախտակների մեջ, որոնք շարքով ընկնում էին ակոսում և ծածկվում հողով: Հատիկները ծլում էին շարքով «... մինչև մէկին քսան ու քսան հինգ» բերք էին տալիս, սերմի կորուստ էր լինում⁴:

Շաղացանի ժամանակ,- գրում է Մ. Խրիմյանը,- Մուշի, Ալաշկերտի և Արարատյան գութաններին չնայած լծում էին ինը գոլյգ գոմեշ ու եզներ, սակայն «հազիւ կը բանեցնեն այդ կոպիտ գութան», որի բացած ակոսը շատ մեծ տարբերություն չուներ Վանա գութանի բացած ակոսից: Գյուղի

սույն խնամողը մտցնում էր ձեռքը և թիմարում: Առանձին վայրերում այն հայտնի է դաշավել անուցով (տե՛ս Ա. Պետրոսյան, ԴԱՆ, տետր 3):

¹ Մ. Խրիմյան, Եզվ. աշխ., էջ 48:

² Նոյն տեղում, էջ 49: Գետինը կորդ թողնելը (խոպան, անմշակ, անվար (տե՛ս Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 3, Երևան, 1974, էջ 195) նպաստում էր հողի բերքատվությանը: Արևմտահայության մեջ ընդունված կորդ բառի փոխարեն արևելահայերն օգտագործում են խոպան թողնել (պարսպ, անմշակ, տե՛ս Ստ. Մախսատյան, Եզվ. աշխ., էջ 278):

³ Երբ հողը փափուկ է «կաթնավարի» հերկոցը կարճ էր տևում, քանի որ հողը ամրանում էր և դժվարացնում վարելը: Խարբերում մինչև վարելը հողը ցրում էին, որի շնորհիվ վարելիս կոշտեր չէին առաջանում (տե՛ս Մ. Խրիմյան, Եզվ. աշխ., էջ 49):

⁴ Նոյն տեղում: Այս շարադրանքում Մ. Խրիմյանը տալիս է Վասպուրականին բնորոշ շարացան համակարգի համառոտ նկարագրությունը, որը հայտնի է տիր կամ դիր դնել անունով: Այն շաղացան համակարգից տարբերվում է ոչ միայն վարելու ու ցանելու աշխատանքակերպով, այլև երկրագործական տեխնիկայի տեխնիկա-տեխնոլոգիական և կառուցվածքաբանական տեսանկյուններից: Հետագայում Վ. Բոդյանը, հենվելով Մ. Խրիմյանի և այլոց վկայությունների և հատկապես իր կողմից գրառված դաշտային նյութերի վրա, վեր հանեց շարացան համակարգը՝ Վանա լճի ավազանում (տե՛ս Վ. Բոդյան, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, 1969, էջ 251-266):

մի քանի տներ միանալով՝ հազիվ էին կարողանում մի գուլթան գնել¹: Վանա գուլթանները դրանց նկատմամբ ավելի կատարելագործված էին, քանի որ հյուսններն այդ արհեստի մեջ վարպետ էին և «լարաչափով ... ուղղություն կտան գութանին» (ընդգծումը՝ Ա. Պ.Ք): Եթե մեր գուլթանը համեմատենք եվրոպական գուլթանի հետ, կտեսնենք, որ նրանք լծում էին մի զույգ գոմեշ կամ երկու զույգ եզ, այնինչ «... մեր գուլթան պետք է չորս լծով բանեցնես»: Մեր «... Աղամայ գուլթան... հաստ կորաքամակ հացի փայտ է», որին վանեցի գյուղացիները «էշ կասեն», դրա առատամին «անցուցած են երկաթէ խոփը»: Վանա գուլթանին լծում են երկու գոմեշ և երեք զույգ եզներ, որի բացած ակոսը հազիվ մի թզաչափ խորություն ունի³:

Մ. Խրիմյանը վկայում է, որ վանեցի վարպետ Դավիթը սովորել է եվրոպական գուլթան պատրաստել և «... Վանայ շրջակայ գիւղացիք սկսած են այդ գուլթանը գործածել», որը բավական էժան է⁴:

Մ. Խրիմյանը նկարագրում է ցանովի արտերը ջրելու ու փոցխելու աշխատանքանակները: Ջրելու նպատակով, արտերում «կորի» են քաշում⁵, իսկ ցանելուց հետո, մշակը «կը մանկեռէ»: Մանկեռի վրա շարված են տասը և ավելի մատներ, այն «հաստ թեղի կարծր և ծանր փայտ է, որոյ վերայ կը կենայ մշակ, չոանի մի ծայրը կը բռնէ, որոյ միւս ծայր կապոած է լուծին: ... մշակական աշխատութեան մեջ ամենէն սոսկալի դժոարութիւն մանկեռն է...»⁶:

Խարբերդում, Կարինում, Բասենում ժողովուրդը ուժ ու միջոց չի խնայում մի անգամ վարած արտը 2-4 անգամ «հարորավար անելով հողը շուռ տալ», - գրում է Մ. Խրիմյանը: Մինչդեռ վանեցիները մի անգամ են

¹ Մ. Խրիմյանը նկատի ունի երկրագործության մեջ լայն տարածում ունեցած համագործակցությունը, որը հայտնի է **հարակաշ** անունով («կիսովի ընկեր, կիսրար, բաժնեկից», տես **Յր. Աճառյան**, Յայտենե արմատական բառարան, հ. 3, Երևան, 1971, էջ 56): Յարակաշի կազմակերպման ձևերի, անդամների իրավունքների, պարտականությունների, մատակարարի վարի և այլ մանրամասները տես **Վ. Բոդյան**, ԳՂՎ. աշխ., էջ 304-310:

² **Մ. Խրիմյան**, ԳՂՎ. աշխ., էջ 44: Այնուհայտ է, որ Մ. Խրիմյանը քաջատեղյակ էր վեցկի կամ արոր «կապելու» գործողությանը, որը խարսխված է ժողովրդական փորձի ու հմտության վրա: Անհրաժեշտ գործիքների բացակայության պարագայում վարող տեխնիկայի հավաքումը կատարվում էր **լարաչափի** կամ **թելաչափի** միջոցով (մանրամասն տես **Վ. Բոդյան**, ԳՂՎ. աշխ., էջ 224-225):

³ Տես **Մ. Խրիմյան**, ԳՂՎ. աշխ., էջ 44: Ըստ **Վ. Բոդյանի** «Գութանի համծողը Բարձր Յայքի խմբի գրեթե բոլոր գավառներում էլ անունն է կրում: Ելը ուղտի պարանոցի ձև ունի» (տես **Վ. Բոդյան**, ԳՂՎ. աշխ., էջ 159):

⁴ **Մ. Խրիմյան**, ԳՂՎ. աշխ., էջ 44:

⁵ Նույն տեղում, էջ 51: **Կորի** – ջրելու համար արտերում և բանջարանոցներում բացված առու (տես ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 3, Երևան, 1973 թ, էջ 197):

⁶ **Մ. Խրիմյան**, ԳՂՎ. աշխ., էջ 51: Ըստ **Վ. Բոդյանի** մանկեռը հայտնի է **փոցխ**, **մանգոռ** անուններով: «Լիներվով առաջին վարող գործիքը՝ այն համարվում է առաջին հարթիչներից մեկը» (տես **Վ. Բոդյան**, ԳՂՎ. աշխ., էջ 266):

արտը վարում և չեն հետևում այլ վայրերի գյուղացիների օրինակին: Հողը չեն պարարտացնում, բավարարվում են եղած արտերի մի մասն ամեն տարի «կորդ» թողնելով¹:

Ուշագրավ են Մ. Խրիմյանի այն դասերը, որոնք վերաբերում են սերմի ընտրությանը և սերմնացանին: Վաղ ժամանակներում գյուղացին սերմը տանում էր քահանայի մոտ, օրհնել տալիս և նոր ցանում: Սերմը մաղելով՝ մաքրում էր ավելորդություններից, առանձնացնում «վտիտ և ցամաքած» հատիկները: Հայտնի է, որ արտերը պարարտացնելով կամ «կորդ մնալով ուժովացված են լինում»: «... մեր սերմնահան մշակներու ձեռք բաւական քաջավարժ է»: Սերմ ցանելու համար սերմնացանի «...ձեռքի բուռը իւր համեմատական չափն է. երբ ուզէ թանձր ցանել բուռը լի կանէ, և երբ նոսր՝ բուռը կծկելով կամփոփէ»²:

Մ. Խրիմյանի վկայությամբ, երբ ցանքը սկսվում էր, սերմնացանը «...տուն չէր դառնար դաշտէն», քնում էր բացած ակոսի մեջ, բաց երկնքի տակ, մինչև ավարտվեր սերմի ցանելու ժամանակը: Ցանքը սկսելու համար նա «... գոտին պինդ կկապէր բուռն մի սերմէն առնելով շապկի սրտաբացէն կը ցանէր ծոցին երկու կողմը մինչև անթատակեր. յետոյ երես խաչակնքելով կսկսէր ցանել արտը»: Ցանքը տևում էր 20-30 օր՝ «... մինչև կը ծլէին ցանոորի ծոցի հատիկներ»: Դա «... մի բարեգուշակ նշան կը համարուէր ցանոած արտերուն պտղաբերութեան...»³:

Մ. Խրիմյանը գրի է առել ցանքի ժամանակ արվող աղոթքների մի շարք, որից բերենք մեկը.

Ես կը ցանեմ, ո՛վ իմ Աստված
Դու անձրեւ տուր առատ առատ
Զոր հատիկներ ծըլին հողէն
Պճնին արտերս կանաչ-կանաչ...⁴

Ցանում են գարնանացան և աշնանացան (ապրիլ-սեպտեմբեր), սակայն եղանակը հաճախ խանգարում է և գարնանացանը ձախողվում: Ուստի գյուղացիները մեծ հույսեր չեն կապում գարնանացանի հետ, հիմնականում ցանում են աշնանացան (օգոստոսի կեսերից – հոկտեմբեր, նպատակահարմար է սկսել սեպտեմբերին): Գարնանացանից և աշնանացանից զատ, գրում է Մ. Խրիմյանը, կա մի համակարգ ևս. աշնան վերջին, երբ գետինը մոտենում է սառելու աստիճանին, ցանում են: Սերմը մնալով հողի

¹ Մ. Խրիմյան, ԳՂՎ. աշխ., էջ 53-54:

² Մ. Խրիմյան, ԳՂՎ. աշխ., էջ 57:

³ Նույն տեղում, էջ 58:

⁴ Նույն տեղում:

մեջ՝ ո՛չ ծլում է, ո՛չ բուսնում: Գարնան գալուսն պես գարնանացանից առաջ ծլում է, քանի որ հողի մեջ փափկում է: Մինչդեռ միշտ չէ, որ գարնանացանը եղանակի պատճառով հնարավոր է լինում իրականացնել¹:

Մ. Խրիմյանը գտնում է, որ արհեստական ուռուցումը խիստ անհրաժեշտ է երկրագործությունից համար, քանի որ անձրևների ուշանալը կարող է փչացնել բերքը: Ուռուցման համար պետք է «...հարմար կորիներ քաշել, շրջադարձի թումբեր կապել»: Կարևոր է վարելահողի դիրքը, քանի որ դառիթափ և անհարթ արտերի ուռուցումը պահանջում է լրացուցիչ աշխատանք: Նկարագրում է գետերից լճակներ պատրաստելու և դրանցով արտերը ջրելու միջոցները: Հանգում է այն հետևություն, թե կոիվներն ու վեճերը, որոնք կապված են արտերը ջրելու հետ, երբ հաճախ «... արիւն ջուրին հետ կխառնվի», իսպառ կվերանան²: Խոսում է արտերի մեջ թմբեր և մարգեր անելու, հողը հարթեցնելու եղանակների մասին: Արտերից քարեր հավաքելը (քարհավաք), քաղհանը համարում է որպես առատ բերք ստանալու կարևոր պայման: Հողին ուժ տալու երկու միջոց կա,- գրում է Մ. Խրիմյանը,- մեկը մի քանի տարով հողը չմշակելն է, որպեսզի արտը հանգստանա, մյուսը արտին գոմաղբ, փոշի տալն է, կամ «սերմը փոխելը»: Այսինքն եթե ցորեն է ցանել, մյուս տարի պետք է խոտ ցանել՝ փոփոխելով ցանովի բույսերը: Այդ ամենի շնորհիվ «ծերացած հողը երիտասարդ կդառնայ»³:

Բերրահավաք («հունձր»): Այս փուլի դասերը նույնպես հենված են կյանքի փորձի և ժողովրդական դարավոր հմտությունների վրա: Այսպես, ցորենի արտը հնձելու ժամանակը որոշելու համար Մ. Խրիմյանը սովորեցնում է հետևյալ ուշադրավ եղանակը: Երբ գյուղացին դաշտ գնալով տեսնում է, որ ցորենի արտերը «... շիկակարմիր գույներով կը ծածանին մեղմաչունչ հովերէն..., հնձելու ժամանակ հասած է»⁴: Հնում կար «մի բարի սովորություն» ուժ արտը շուտ էր հասունանում, հարևանները և բարեկամները գալիս էին նրա արտը քաղելուն օգնում, որը փոխադարձ էր:

Մ. Խրիմյանը վկայում է, որ ցորենի արտերը հնձում են մանգաղով, երբ բույսը ցանցառ է ու կարճ, ինչպես նաև գերանդիով, երբ ցողունները բարձրահասակ են և խոտախառը: Բացառություն է կազմում Մուշը, որտեղ հոտաղները «... չգիտեն մանգաղ, ամենայն ինչ գետնի երեսէն բուսածները գերանդիով կը սրբեն», ոչինչ որ հատիկները գետին կթափվեն:

¹ Նույն տեղում: Այս համակարգի վերաբերյալ այլ աղբյուրներում որևէ վկայություն չկա:

² Մ. Խրիմյան, նշվ. աշխ., էջ 62:

³ Նույն տեղում, էջ 71:

⁴ Նույն տեղում, էջ 73:

Մուշն այնպիսի դաշտեր ունի, որ հողի մեջ ընկած հատիկները աշնան արևի շնորհիվ կծլեն և «... հնձած արտերը նորէն կանաչապատ են»¹:

Կալսոց («կալ և կալատեղ»): Խրիմյան Հայրիկը թեև համառոտ, սակայն տվել է այս փուլի նկարագիրը: Մինչև հունձը,- գրում է նա,- գյուղացին պետք է կալատեղի համար պատրաստութուն տեսնի, կալսելու գործիքները կարգի բերի: Վանի արևելյան և հյուսիսային հատվածներում գյուղացին կալատեղ պատրաստելու անհրաժեշտութուն չունի, քանի որ «... գիւղերուն մոտ խիտ և մանրաբոյս մարգեր կան, որ գետնին երես ծածկած են իբրև մի կանաչազարդ փոռոց, ինչպէս մեր Արճակ գիւղին կալատեղեր, որք բնական են և պէտք չունին պատրաստութեան»²: Այդ պատճառով բերքը մաքուր է, առանց քարի ու հողի: Այն վայրերում, որտեղ խոտածածկ չկա, երկրագործը պետք է ամեն տարի կալ պատրաստի: Նախ փորում է կալի տեղը, ջրում և գետնի մակերեսը հարթեցնում բահով: Ջուրը ցամաքելուց հետո մակերեսին հարդ են շաղ տալիս և բահի հակառակ երեսով հարթեցնում: Սակայն այս եղանակով պատրաստված կալը լիովին չի հարթեցվում և կալսելիս բերքը գերծ չէ ավազից ու հողից³: Կալսելու համար հարմար է ջառջառ գործիքը, որը «... փայտէ մի գլանակ է՝ երկու կանգուն երկար, որոյ վերայ շարոած են ոլոր ձեւով երկաթէ սուր ուրագներ, որ անոռածեւ դառնալով կը կոտորտէ օրանն: Մանաւանդ, երբ ձիեր լծոած լինին ջառջառին (ընդգծումը՝ Ա. Պ.), արագապէս դառնալով կամնասայլէն շատ աւելի գործ կը տեսնեն»⁴: Մ. Խրիմյանը նկարագրում է նաև եվրոպական երկրներում կիրառվող քամահար մեքենաները և դրանց առավելութունները: Ուշագրավ են հնձած բերքը պահելու վերաբերյալ Մ. Խրիմյանի դասերը: Փորձված է, որ «... ցորեն աւելի լաւ կը պահուի երկար ժամանակ դէզերուն մէջ իրանց հասկերով ու պատեաններով, քան թէ շտեմարանին մեջ որ շատ անգամ կը տաքանայ, կոջլոտի եթէ երբեմն խառնելով չի դարձնես»⁵:

¹ Մ. Խրիմյան, ԳՂ. աշխ., էջ 77:

² Նույն տեղում, էջ 75:

³ Նույն տեղում:

⁴ Այս հակիրճ շարադրանքում Մ. Խրիմյանը տվել է ոչ միայն ջառջառի նկարագրությունը, այլև բացատրել աշխատեցնելու սկզբունքներն ու կամի նկատմամբ ունեցած առավելությունները (նույն տեղում): Կալսելու նախնական ձևերից մինչև կամ ու կամնասայլ կիրառված եղանակները մանրամասն նկարագրել է Վ. Բոլոյանը: Հակառակ կամի, կամնասայլը կալսում է ուրագի կամ ատամ կոչված երկաթե կտրիչների միջոցով: Գործիքի ջառջառ-ճառճառ անունը ծագում է ճոճալ բառից, քանի որ կամնասայլն աշխատելիս ճոճում է: Արևմտահայության մեջ պահպանված էր ճիշտ ճառճառ անունը, իսկ արևելահայության մեջ՝ ջառջառ աղավաղված ձևը (տես Վ. Բոլոյան, ԳՂ. աշխ., էջ 406): Նկատենք, որ Մ. Խրիմյանը օգտագործել է ոչ թե ճառճառ, այլ ջառջառ տերմինը:

⁵ Մ. Խրիմյան, ԳՂ. աշխ., էջ 79: Այս մասին որևէ հիշատակություն հայտնի չէ:

Ամբարում («շտեմարան»): Անդրադառնալով երկրագործությունյան ավարտական փուլին՝ Մ. Խրիմյանը գրել է. Վարագա Խաչի տոնին նախկին սովորույթով «... բոլոր Վասպուրական աշխարհ ... հարիսայ կը դնէ ... ցընծութեան օր է, մեք այս աւուր կալի կորկոտ (ընդգծումը՝ Մ. Խ.) կասենք, վասն զի կալեր կը վերջանան»: Կար ժամանակ, որ հարուստները «... մէկ մէկ եզ կը մորթէին հարիսայի համար, իրենց մեռելները յիշելով հոգևոյ հաց կը պատրաստէին»¹: Հարիսա եփելու վերաբերյալ Մ. Խրիմյանը գրառել է ուշագրավ երգաչար, որից բերենք մի փոքր հատված.

Էս օր, գիտէ՞ք թե ի՞նչ օր է
Մեր Վարագայ Խաչի տոնն է.
Եւ մենք կասենք կալի կորկոտ,
Հարիսայի մեծ տոնն է:
Բոլոր աշխարհ Վասպուրական
Հարիսայի տոն կատարէ...²

Հարիսայի անվան ծագման վերաբերյալ բերում է մի ավանդազրույց, որը «ես էլ իմ պապկես լսած եմ»: Այդ զրույցի համաձայն, երբ Գրիգոր Լուսավորիչը Խոր Վիրապից եկավ Վաղարշապատ, սկսեց իր քարոզները: Նա բերել տվեց «չատ եզ ու ոչխար», մորթեցին, լցրին մեծ կաթսաների մեջ և դրին կրակին: Մսի վրա լցրին «կորկոտն», և Գր. Լուսավորիչը երիտասարդներին հրամայեց «հարէք ըսա», որից էլ այս «կերակուրի անուն մնաց հարիսա: Այս կերակուր հայկական մի պատտական կերակուր է» (ընդգծումը՝ Ա. Պ.թ):

Շտեմարանի պատրաստումը,- գրում է Մ. Խրիմյանը,- գյուղացու համար «պարզ ու նախնական է»: Սովորաբար գյուղացիներն իրենց ցորեն, գարին «...կը հորեն ի գետին», կողքերը խոտ կամ հարդ լցնելով, որը վնասում է բերքին: Ուրիշները «... հողէ մեծ մեծ փեթակներ կը շինեն» ցորենը պահելու համար, սակայն ամենից հարմարը շտեմարան պատրաստելն է³:

Տնտեսական կենցաղի վերաբերյալ Մ. Խրիմյանի դասերը միայն երկրագործությունը չեն վերաբերում: Ուշագրավ են անասունների խնամքի, ստացված եկամուտների, շների միջոցով հոտերը հսկելու, ծառերի մշակման, փայտի տարբեր տեսակներն արհեստագործության մեջ օգտագործելու, շերամապահության, մետաքսի ստացման վերաբերյալ համառոտ ակ-

¹ Նույն տեղում, էջ 80: Կալի կորկոտ – ծեծած և թեփը հանած ցորեն կամ գարի: Չավարով և մսով կճուճի մեջ եփած թանձր կերակուր, հարիսայի մի տեսակը (տե՛ս Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 3, էջ 197):

² Մ. Խրիմյան, նշվ. աշխ., էջ 80: Կորկոտի տոնը վասպուրականցու սիրելի տոներից է:

³ Նույն տեղում, էջ 81:

⁴ Նույն տեղում, էջ 82:

նարկները, որոնք արժանի են ուշադրութեան: Ծառերի մշակման համար «... մի սղոց և կոռ դանակ առնելով», պետք է կտրել չորացած ճյուղերը, փորել պտղատու ծառերի բները: Բնակարանի ծածկի համար անհրաժեշտ է բարդի, կաղամախի, ուռենի, իսկ «Հացի փայտ պետք է գուլթանի կոռ էջին և առատամի համար, թեղի փայտ է սայլերու մածան¹ կաղմելու և տնակի² համար» (ընդգծումները՝ Մ. Խ.):

Ըստ Մ. Խրիմյանի շերամապահության զարգացման համար անհրաժեշտ է տնկել թթենու ծառեր. «... թթենիի մշակութեան բուն արդիւնք խոզակն է, կամ պէտք է ժամանակին խոզակ ծախել և կամ խոզակներէն թել քաշելով ապրում ծախել»: Իսկ «... երբ կսկսին որդեր խոզաններ հիւսել», պետք է «փոքրիկ-փոքրիկ ծառի ճղիկներ պատրաստել...»³ (ընդգծումները՝ Ա. Պ.):

Ուշագրավ և եզակի է երկրագործ-մշակների՝ դաշտում ճաշելու վերաբերյալ Մ. Խրիմյանի հետևյալ հաղորդումը. «Մշակին սեղան կանաչազարդ գետինն է, ուր կը փռեն մէզար, կը շարեն վրան թագէ հացեր, կը բանան մածնի տոպրակ, հողէ կամ փայտէ կտտին մեջը կը հարին զմածուն աղբիւրի պաղուկ ջրով, հետոյ կառնեն գդալներ...»⁴ (ընդգծումները՝ Մ. Խ.):

¹ Մ. Խրիմյան, ԳՂՎ. աշխ., էջ 106: Թեղի ծառի փայտից սայլի մածան շինելու մասին Մ. Խրիմյանի վկայությունը եզակի է, իսկ բառարաններում **մածան** բառի վերաբերյալ եղած մեկնությունները սայլի հետ ոչ մի աղերս չունեն: Մածանն այն երկու ամուր հեծաններն են, որոնք ձգվում են սայլի թափքի կողքերից, որի ծայրերը կապվում և դրվում էր լծի մեջտեղին: Սայլի ներքին և վերին հեծանները իրար ամրացվում էին ճաղերի միջոցով՝ ստեղծելով ճաղաշարք, իսկ թարփի հատակին փռում էին տախտակներ (տե՛ս Хароды Кавказа, Армения, т. II, М., 1962, էջ 488): Հայոց վարող տեխնիկայում **մասանը** հայտնի է որպես համծողի «կցորդ», «վեսկու շարժական մաս» (տե՛ս Վ. Բոդյան, ԳՂՎ. աշխ., էջ 223):

² Նույն տեղում: **Սոնակը** (սոնի) պատրաստում էին թեղի ամուր փայտից, որպեսզի ուշ մաշվեր: «Սոնու երկու ծայրերին ամրացվում էին սայլի կամ կառքի անիվները» (տե՛ս Ստ. Մալխասյան, ԳՂՎ. աշխ., հ. 4, Երևան, 1945, էջ 259): Ավելի վաղ, երկանիվ սայլի անիվները պատրաստում էին հաստ տախտակներից՝ սկավառակաձև, և ամրացնում սոնուն, որը պտտվելով՝ պտտեցնում էր անիվները: Այն հայտնի է «կույր սել» կամ «մարան» սել անունով: 20-րդ դ. սկզբին, Արևելյան Հայաստանում սայլի անիվները դառնում են ճաղավոր, որոնք պտտվում են անշարժ սոնու շուրջը (Хароды Кавказа, էջ 480): Բնակարանի ծածկի, վարող տեխնիկայի, փոխադրամիջոցների, տարբեր ծառատեսակների փայտը արհեստագործության մեջ օգտագործելու մասին Մ. Խրիմյանի վկայությունները հենված են ժողովրդական դարավոր փորձի վրա:

³ Նույն տեղում, էջ 109: Այս փոքրիկ հատվածում Մ. Խրիմյանը համառոտ նկարագրել է շերամապահության հիմնական փուլերն ու աշխատանքային գործընթացները: **խոզակ** (շերամի բոժոժ) բառն առավել տարածված էր արևմտահայության մեջ, իսկ Արևելյան Հայաստանում՝ **բոժոժ**: **Ապրեշումը** մետաքսն է, ապրեշում բառը հայերենին է անցել Պարսկաստանից: Փոքր ծառերի ճղիկներ խոսքերի տակ Մ. Խրիմյանը նկատի ունի բոժոժավելների պատրաստելն ու հարկերի վրա տեղադրելը: Պետք է ժամանակին դրվեր բոժոժավելները, որպեսզի որդերը բոժոժ հյուսելին դրանց վրա (տե՛ս Ա. Պետրոսյան, Հայոց շերամապահական մշակույթը, Երևան, 1987):

⁴ Մ. Խրիմյան, ԳՂՎ. աշխ., էջ 108:

Այսպիսով, Մ. Խրիմյանի գրառումները հայոց տնտեսական կենցաղի վերաբերյալ ընդգրկում են երկրագործական մշակույթի չորս հիմնական փուլերը՝ «վարուցան», «հունձք», «կալ ու կալատեղ», «չտեմարան»: Ընդհանուր գծերով նա անդրադարձել է սերմի ընտրությունը, ցանելու, վարելու եղանակներին, «կաթնավարին», «դիր» դնելուն, արտի մի մասը «կորդ» թողնելուն, «կորի» քաշելուն, հողը «մանկեռելուն» և այլն: Ներկայացրել է երկրագործական վարող տեխնիկայի (արոր, նախագուլթան, գուլթան), բերքահավաքի (մանգաղ, գերանդի, փոցիս), կալսման (կալ, կամ, կամնասայլ) և ամբարման (հորեր, կավե, փայտե ամաններ), փուլերի տեխնիկա-տեխնոլոգիական, սոցիալ-ծիսական տեսանկյունները, ժողովրդական փորձն ու հմտությունները: Միայն «մաճկալ», բանասաց, բանահավաք ու բանիմաց ազգագրագետը կարող էր մտնել երկրագործական մշակույթի ծալքերը՝ ապագա սերունդներին կտակելով հազարամյակների պատմության ունեցող զբաղմունքի համառոտ շարադրանքը:

Ուշագրավ է Մ. Խրիմյանի գրառումներն անասունների խնամքի, քաշող ուժի, արհեստագործության, փոխադրամիջոցների տեսակների, շերամապահության, մետաքսի ստացման մասին: Նկատենք, որ 19-րդ դ. երկրորդ կեսին այս ոլորտները դեռևս լիովին չէին ընդգրկվել մինչև իսկ ազգագրական ուսումնասիրությունների շրջանակներում: Ահա ինչու տնտեսական կենցաղի վերաբերյալ Մ. Խրիմյանի գրառումներն ունեն ազգագրական հետազոտությունների սկզբնաղբյուրի արժեք: